ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/4.2-4-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2025թ. հունիսի 23-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթին հայտ չի ներկայացվել:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

Հաշվի առնելով, որ **Ծրագրի** հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթին հայտ չի ներկայացվել, մրցույթը լուծարել:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____